



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2024 թվականի № 309-Ա

ԳՈՀԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի հուլիսի 4-ի № 278-Ա որոշումը և *Սերիա ZZ №276862 անաշխատունակության թերթիկը՝ որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Գոհար Կարապետյանի* 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդն երկարաձգել հինգ աշխատանքային օրով՝ 2024 թվականի օգոստոսի 12-ից 16-ը ներառյալ:

2. *Գոհար Կարապետյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ *Թերեզա Գևորգյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2024 թվականի հուլիսի 30
ք. Հրազդան

